# Թեստ՝ տարրական աստիճանի ուսուցիչների համար

## Բնագիտություն

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ առարկայական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է 53:

Ուշադրությամբ ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, լավ ըմբռնեք առաջադրանքի պահանջը և դրանից հետո սկսեք աշխատանքը: Թեստի վրա աշխատելիս՝ կիրառեք կցված քարտեզները:

**Ի նկատի ունեցեք.**

- Եթե ճիշտ պատասխանի հետ միասին նշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր չեք ստանա:

**Թեստի վրա աշխատանքի համար տրվում է 4 ժամ:**

**Ցանկանում ենք հաջողություն:**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

# Առարկայական գիտելիք

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **1.** Թվարկածներից ո՞րն է արհեստական էկոհամակարգ:

ա) Արգելոցը,

բ) անտառը,

գ) բուսաբանական այգին,

դ) ճահիճը:

(1) **2.** Բույսի ո՞ր մասը կարող է ամենաերկար ժամանակահատվածում լինել հանգիստ վիճակում:

I – Սպորը  II – Սերմը  III – Պալարը

ա) Միայն I,

բ) միայն II,

գ) միայն III,

դ) I և III:

(1) **3.** Նկարում տրված է արմնկային հոդը գործողության մեջ դնող երկգլխանի (1) և եռգլխանի (2) մկանները: Ի՞նչ վիճակում են լինում մկանները արմունկը ծալելու ժամանակ:




| | 1 | 2 |
|---|---|---|
| ա) | Կծկված | Թուլացած |
| բ) | Թուլացած | Կծկված |
| գ) | Կծկված | Կծկված |
| դ) | Թուլացած | Թուլացած |


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **4.** Նկարում պատկերված են երկու ծաղկամաններում տնկված բույսեր: Առաջին ծաղկամանի բույսերի աճի և զարգացման համար ստեղծել են նորմալ պայմաններ, իսկ երկրորդի համար՝ ոչ: Որոշե՛ք, ի՞նչ պակասեց երկրորդ ծաղկամանի բույսերին՝ զարգացման համար:




I – Ջերմություն

II – Լույս

III – Ջուր

ա) Միայն I,

բ) Միայն II,

գ) I և II,

դ) II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **5.** Ո՞ր ոսկորը **<u>չի մտնում</u>** կրծքավանդակի կազմության մեջ:

ա) Ողը,

բ) կողոսկրը,

գ) թիակոսկրը,

դ) կրծոսկրը:

(1) **6.** Որոշ բույսերի տերևները ծածված են մոմանյութի բարակ շերտով, որը պաշտպանում է բույսին.

I – պաթոգեն (ախտածին) միկրոօրգանիզմներից (մանրէներից)

II – վնասակար նյութերի ներթափանցումից

III – ջրի կորստից

ա) Միայն I և II,

բ) միայն I և III,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

(1) **7.** Անտառում խոտաբույսերի համար սահմանափակող էկոլոգիական գործոնը մեծ մասամբ.

ա) լույսի ինտենսիվությունն է,

բ) բնահողի բաղադրությունն է,

գ) ջերմաստիճանն է,

դ) ջուրն է:

(1) **8.** Միայն կաթնասուններն ունեն.

I – տարբերակված ատամներ

II – քառախորշ սիրտ

III – լավ զարգացած գլխուղեղ

ա) Միայն I,

բ) միայն II,

գ) I և II,

դ) I և III:

(1) **9.** Նկարում տրված ձևափոխված ցողունով տեղի է ունենում.




I – վեգետատիվ բազմացում

II – անբարենպաստ ժամանակաշրջանի հաղթահարում

III – պաշարային նյութերի կուտակում

ա) Միայն I և II,

բ) միայն II և III,

գ) միայն I և III,

դ) I, II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **10.** Ի՞նչ գործառույթ է կատարում մարդու կմախքը:

I – ստեղծում է հենարան

II – սահմանում է մարմնի ձևը

III – ապահովում է մարմնի տեղաշարժը

ա) Միայն I և II,

բ) միայն II և III,

գ) միայն I և III,

դ) I, II և III:

(1) **11.** Ո՞ր օրգաններով է բույսը ֆոտոսինթեզի համար կլանում անհրաժեշտ երեք գլխավոր ռեսուրսները. ջուրը (I), լույսը (II) և ածխաթթու գազը (III):

| | I | II | III |
|---|---|---|---|
| ა) | Արմատ | Ցողուն | Տերև |
| ბ) | Արմատ | Տերև | Տերև |
| გ) | Ցողուն | Տերև | Ցողուն |
| დ) | Ցողուն | Ցողուն | Արմատ |

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **12.** Ո՞ր բույսերն են զարգանում սպորներից:

I – Սոճին II – Պտերը III – Մամուռը

ա) Միայն I և II,

բ) միայն II և III,

գ) միայն I և III,

դ) I, II և III:

(1) **13.** Նկարում կենդանիները նշված են լատինական տառերով: Որոշե՛ք ո՞ր տառով նշված կենդանիների միջև է հաստատվում բիոտիկ (կենսածին) փոխհարաբերություն՝ չեզոքությունը և որոնց միջև՝ մրցակցությունը:




| | Չեզոքություն | Մրցակցություն |
|---|---|---|
| ა) | A և C | A և B |
| ბ) | B և C | A և C |
| გ) | A և E | B և D |
| დ) | C և D | E և D |


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **14.** Կաթնասունների և թռչունների ընդհանուր հատկությունն է.

I – տաքարյունությունը

II – կենդանածնությունը

III – սերունդների խնամքը

ა) I և III,

ბ) Միայն I,

გ) միայն II,

დ) միայն III:

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **15**. Ինչպիսի՞ ծաղիկներ ունեն միջատներով փոշոտվող բույսերը:

I – մեծ և վառ գույնի

II – հոտավետ, նեկտար արտադրող

III – անհոտ և կանաչավուն գույնի

ա) I և II,

բ) Միայն I,

գ) միայն II,

դ) միայն III:

(1) **16.** Թվարկած կենդանիներից ո՞րն է ամենակեր կաթնասունը:

1. Արջը 2. Գայլը 3. Խլուրդը 4. Նապաստակը

ა) 1 և 2,

ბ) 1 և 3,

გ) 2 և 3,

დ) 3 և 4:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **17.** Ո՞ր թվանշաններով նշված կորերն են համապատասխանում տերևում ֆոտոսինթեզի գործընթացում թթվածնի և ածխաթթու գազի կոնցենտրացիաների փոփոխությանը:




ა) 1 և 3,

ბ) 1 և 4,

გ) 2 և 3,

დ) 2 և 4:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **18.** Միջատները շնչում են.

ա) թոքերով,
բ) խռիկներով,
գ) տրախեաներով,
դ) մաշկով:

(1) **19.** Ցուրտ միջավայրում գոյության պատճառով ինչպիսի՞ ադապտացիա (հարմարվողականություն) է ձևավորվել կետի մոտ:

ա) Հաստ և խիտ մազային ծածկույթ,

բ) ենթամաշկային ճարպի հաստ շերտ,

գ) երկարավուն մարմին,

դ) արագ լողալու ունակություն:

(1) **20.** Չափեցին չորս տարբեր մարմինների ծավալները և խտությունները: Չափման արդյունքները կետերի տեսքով տրված են դիագրամի վրա: Ո՞ր մարմնի զանգվածն է ամենափոքրը:




ա) 1-ի,

բ) 2-ի,

գ) 3-ի,

դ) 4-ի:

(1) **21.** Նկարի վրա պատկերված է սառույցի կտորներով ջրով բաժակ, որը տեղադրեցին սենյակի պատուհանի գոգին: Բաժակի պատին արտաքինից առաջացան ջրի կաթիլներ: Ո՞ր գործընթացն է դրա պատճառը:




ա) Հալեցում,

բ) Գոլորշիացում,

գ) Կոնդենսացիա,

դ) Ջրի հոսքը բաժակի մակերևույթին առաջացած թաղանթի վրա:


[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **22.** Դպրոցի կողմը տանող ճանապարհին աշակերտը հիշեց, որ տանն է մնացել տետրը: Նա ետ դարձավ և հետո կրկին գնաց դեպի դպրոց: Ստորև բերված ո՞ր գրաֆիկը կարող է արտացոլել աշակերտի տնից x հեռավորության կախվածությունը t ժամանակից մինչև դպրոց գալու մոմենտը:



I



II

ա) Ոչ մեկը,

բ) Երկուսն էլ,

գ) Միայն I,

դ) Միայն II:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **23.** Թվարկածներից ո՞ր գալակտիկային է պատկանում Երկրագունդը:

I. Ծիր Կաթին, II. Անդրոմեդայի ամպամածություն, III. Սոմբրերոյի գալակտիկան:

ա) I-ում,

բ) II-ում,

գ) III-ում,

դ) Թվարկածներից ոչ մեկում:

(1) **24.** Ֆիզիկական երևույթների ժամանակ նյութը անփոփոխ է մնում, իսկ քիմիականի ժամանակ փոփոխվում է և առաջանում է այլ նյութ:

Ի՞նչ են այս տեսանկյունից իրենցից ներկայացնում ստորև թվարկած երևույթները:

**I – սպիրտի այրում,**

**II – սպիրտի գոլորշիացում:**

ա) I – ֆիզիկական, II – քիմիական,

բ) I – քիմիական , II – ֆիզիկական,

գ) երկուսն էլ ֆիզիկական,

դ) երկուսն էլ քիմիական:

(1) **25.** Փորձանոթները, որոնց մեջ լցված էին սենյակային ջերմաստիճանի A, B և C հեղուկներ, իջեցրին սառցային ջրի մեջ: Ո՞ր նյութը կպնդանա այդ ժամանակ:

Տեղեկությունն այդ նյութերի հալման ջերմաստիճանի մասին կարող եք տեսնել ստորև տրված աղյուսակում:

| **Նյութ** | **Հալման ջերմաստիճան,** ℃ |
|---|---|
| **A** | $+5$ |
| **B** | $-5$ |
| **C** | $-25$ |

ա) Միայն A,

բ) միայն A և B,

գ) միայն B և C,

դ) Երեքն էլ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **26.** Ի՞նչ գործընթաց  է դիստիլյացիան:

ա) Լուծվող և չլուծվող նյութերի տարանջատում զտման միջոցով,

բ) միմյանց հետ  չլուծվող հեղուկների բաժանումը նստեցման  միջոցով,

գ) հեղուկ նյութերի խառնուրդի բաժանումը թորման միջոցով,

դ) պինդ և հեղուկ նյութերի տարանջատումը նստեցման միջոցով:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **27.** Ո՞ր օվկիանոսի քարտեզի հատվածն է ներկայացված առաջադրանքում:




ա) Խաղաղ,
բ) Հնդկական,
գ) Ատլանտյան,
դ) Հարավային:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **28.** Ո՞ր լուսանկարում է պատկերված օդերևութաբան:



ա)



բ)



գ)



դ)

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **29.** Համաձայն քարտեզի հատվածի հաշվեք, թե ծովի մակարդակից քանի մետր բարձրության վրա է գտնվում A կետը:




Մասշտաբ 1:10 000

ა) 151
ბ) 153
გ) 154
დ) 156


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **30.** Համաձայն քարտեզի հատվածի՝ ո՞ր դատողությունն է ճիշտ:




ա) 1-ին և 2-րդ հողամասերը գտնվում են գետի աջ ափին:
բ) Անտառը գտնվում է ջրհորից դեպի հյուսիս:
գ) Ցիվի գետի ձախ ափի երկայնքով ձգվում է ձոր:
դ) Քարտեզի վրա նշված է խառը անտառի ծառուտ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **31.** Քարտեզի վրա տրված են չորս տարբեր նավերի գտնվելու վայրերը: Դրանցից ո՞րը կարող է շարժվել այն երթուղով, որով հնարավոր է մտնել Սև ծով ամենակարճ ճանապարհով:




ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **32.** Քարտեզի վրա նշված տեղանքներից որտե՞ղ է ապրում լուսանկարում պատկերված կենդանին:






ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **33**. Քարտեզի վրա նշված տեղանքներից որտե՞ղ է ուժեղ երկրաշարժ առաջանալու ամենացածր հավանականությունը:




ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **34.** Ո՞ր նկարում է պատկերված կեսօրյա ստվերը:




1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **35.** Սխեմայի վրա լատինական ո՞ր տառով է նշված լիտոսֆերան:




ա) A
բ) B
գ) C
դ) D


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **36.** Առաջադրանքում տրված են Արեգակնային համակարգի Երկրային խմբի մոլորակների ափելիոնները (հեռակետ՝ մոլորակի ուղեծրի ամենահեռավոր կետը Արեգակից): Ո՞րն է Վեներա մոլորակի ափելիոնը:

ա) 69,82 մլն.կմ.

բ) 108,94 մլն.կմ.

գ) 159,1 մլն.կմ.

դ) 249,26 մլն.կմ.

(1) **37** Ո՞ր լուսանկարում է պատկերված անթրոպոգեն լանդշաֆտը:













1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **38.** Համաձայն առաջադրանքում տրված սխեմայի ո՞ր դատողությունն է ճիշտ:



ա) Հարավային բևեռում բևեռային օր է:

բ) Հյուսիսային բևեռում բևեռային գիշեր է:

գ) Երկրի վրա ցերեկվա և գիշերվա տևողությունը ամեն տեղ հավասար է:

դ) Հյուսիսային արևադարձում ցերեկվա տևողությունը գերազանցում է գիշերվա տևողությանը:

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **39.** Ձուն եփելու համար որտե՞ղ է պահանջվում ավելի շատ ժամանակ:



ա) Մղինվարծվերի լեռան վրա,

բ) Ջոմոլունգմա լեռան վրա,

գ) Դենալի լեռան վրա,

դ) Կոսցյուշկո լեռան վրա:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

# Ակադեմիական հմտություններ

# Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

I Կրթության բնագավառում անհավասարությունը ենթադրում է այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն տարբեր խմբերի միջև կրթական կարողությունների, ռեսուրսների և, համապատասխանաբար արդյունքների առումով: Անհավասարությունը կարող է դրսևորվել տարբեր ուղղություններով, ինչը կախված է տնտեսական, սոցիալական, գենդերային, էթնիկական կամ այլ գործոններից: Օրինակ՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ ավելի քիչ հնարավորություններ ունեն կրթության համար, դրանք են՝ լավ դպրոցներ, ուսուցիչներ, տեխնոլոգիաներ և լրացուցիչ կրթական ռեսուրսներ ստանալու հասանելիությունը: Այդ պատճառով նրանք կարող են դժվարանալ հաջողության հասնել: Նույնպես որոշ մշակույթներում աղջիկները կրթություն ստանալու սահմանափակ հնարավորություններ ունեն, ինչը պայմանավորում են հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ պահպանողական սպասումները և կարծրատիպային համոզմունքները:

II Կրթական անհավասարությունը ուղղակիորեն կապված է մարդկային կապիտալի ցուցչի հետ: Այս վերջինը այն ցուցանիշն է, որն արտացոլում է երկրի բնակչության կրթության և առողջական վիճակի որակի գնահատականը: Եթե երկրի բնակչությունը ստանում է որակյալ կրթություն և առողջապահական ծառայություններ, ապա նրա «մարդկային կապիտալը» բարձր է, ինչը նշանակում է, որ այդ երկրի քաղաքացիներն ունեն լավ պայմաններ իրենց կարողությունները՝ ներուժը իրացնելու համար, ինչը, համապատասխանաբար, պայմանավորում է երկրի տնտեսության հզորությունը:

III Կա՛ համոզմունք, որ եթե բավականաչափ աշխատես, անպայման կհասնես քո բոլոր նպատակներին: Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է, և համապատասխանաբար՝ անկախ է սոցիալական ծագումից: Սակայն ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ չեն կարողանում իրացնել իրենց կարողությունները անհավասար պայմանների պատճառով: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքները հաճախ չեն կարողանում մեծ ներդրում կատարել իրենց երեխաների կրթության մեջ, ինչը պայմանավորում է ցածրորակ կրթություն և, հետևաբար, աշխատաշուկայում այս աշակերտների ցածր հնարավորություններ: Սա ստեղծում է անհավասարություն, որը փակ շղթայի մեջ է դնում սոցիալ-տնտեսական առումով անապահով խմբերին, քանի որ նրանք բարձր կրթական մակարդակ ունենալու ավելի քիչ հավանականություն՝ շանս ունեն:

Անցնել հարցերին. 40 41 42 43 44
1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

IV Կրթական անհավասարության խնդրով հետաքրքրված ֆրանսիացի հետազոտող Սեբաստիան Գուդոն ուշադրությունը կենտրոնացրեց մեկ այլ տեսակետի վրա: Նրա հետազոտության արդյունքների համաձայն՝ անհավասարությունը սկսվում է վաղ տարիքից: Սոցիալական խավը ազդեցություն է գործում այն բանի վրա, թե ինչ լումա է ներդնում երեխան դասի ընթացքում, ինչպես նաև այն բանի վրա, թե ինչպես են երեխաները գնահատում իրենց անձը և ուրիշներին: Պարզվել է, որ ցածր սոցիալական խավի ընտանիքների երեխաները ավելի քիչ են մասնակցում խմբային քննարկումներին, քան բարձր սոցիալական խավի իրենց հասակակիցները: Կարևոր է, որ այս իրավիճակը չբացատրվի երեխաների միջև լեզվական կարողությունների կամ ինքնարտահայտման պակասով: Այն նորմերը, որոնք ցածր սոցիալական խավի ընտանիքներում սովորական են, հակասում են այն նորմերին, որոնք տարածված են դպրոցում: Նրանց ինքնարտահայտման ձևերը և մշակութային փորձառությունները թերագնահատվում են դասարանում: Երեխաները համեմատում են իրենց անձը ուրիշների հետ, հայտնաբերում են տարբերություններ, տան և դպրոցի միջև մշակութային անհամապատասխանություններ և իրենց նկատմամբ բացասական սպասումներ, ինչը ուժեղացնում է ուրիշների կողմից քննադատվելու վախը և, հետևաբար, նրանք խուսափում են ինքնադրսևորումից:

V Կրթության վաղ շրջանում ստեղծված անհավասար ուսումնական միջավայրը կրթական ողջ կարիերայի ընթացքում առաջադիմության տարբերությունների նշանակալից հիմքերից մեկն են:

Անցնել հարցերին. 40 41 42 43 44

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **40.** Կրթության մեջ անհավասարության ո՞ր երկու պատճառներն են պատկերված առաջին պարբերությունում բերված օրինակներով:

ա) Տնտեսական և էթնիկական,

բ) էթնիկական և  գենդերային,

գ) տնտեսական և գենդերային,

դ) սոցիալական և էթնիկական:

Վերադարձ տեքստի  I էջին

Վերադարձ տեքստի  II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **41.** Թվարկածներից ո՞րն է ճիշտ ներկայացնում կրթական անհավասարության և մարդկային կապիտալի ցուցչի միջև եղած կապը:

ա) Բարձր եկամուտ ունեցող երկրները միանշանակ ունեն հասանելի կրթություն և մարդկային կապիտալի բարձր ցուցիչ:
բ) Եթե երկիրն ունի մարդկային կապիտալի բարձր ցուցիչ, դա նշանակում է, որ այդ երկրում չկա որևէ մարդ, որը ստացել է ցածրորակ կրթություն:
գ) Մարդկանց ցածրորակ կրթությունը պայմանավորված է աղքատությամբ, չնայած հնարավոր է այդ պատճառը փոխհատուցել որակյալ առողջապահությամբ, հետևաբար, մարդկային կապիտալը չի տուժի:
դ) Եթե մարդիկ կրթություն ստանալիս ունեն տարբեր պայմաններ, նրանց կարողությունները պակաս զարգացած կլինեն, և, համապատասխանաբար, երկրում կտուժի մարդկային կապիտալը:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **42.** Տեքստի երրորդ պարբերությունում կարդում ենք. «Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է»: Թվարկածներից ո՞րն է **կասկածի տակ դնում** այդ կարծիքը:

ա) Այն աշակերտները, ովքեր սիստեմատիկաբար բացակայում են դպրոցից, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

բ) Աշակերտների մեծ մասը, ում մայրենի լեզուն չի համընկնում դպրոցում ուսուցման լեզվին, չունեն բարձր ակադեմիական առաջադիմություն:

գ) Աշակերտները, ովքեր չունեն համակարգված կերպով առաջադրանքները կատարելու սովորություն, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

դ) Աշակերտների մեծ մասը, ովքեր չունեն համբերատար լինելու պատշաճ զարգացած ունակություն, չեն հասնում ակադեմիական հաջողությունների:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **43.** . Թվարկածներից ո՞րն է տեքստի չորրորդ պարբերությունում նկարագրված հետազոտության արդյունքների վրա հիմնված արդարացի եզրակացությունը:

ա) Սեփական տարբերակվածության ընկալումը և ուսումնական միջավայրում աջակցության պակասը բացասաբար են անդրադառնում երեխաների ինքնագնահատման վրա, ինչը պատնեշ է հանդիսանում նրանց կարողության իրացման համար:

բ) Երեխաների լեզվական կարողությունների և ինքնարտահայտման հմտությունների համաձայն՝ երեխաների միջև գոյություն ունեցող տարբերությունները պայմանավորում են նրանց ներգրավվածությունը ուսումնական ակտիվություններում, ինչը, համապատասխանաբար պատնեշ է ստեղծում կրթության հասանելիության համար:

գ) Երեխաների միջև տարբերությունները սոցիալական դասի համաձայն բացատրվում է նրանց մշակութային փորձառությունների տարբերություններով, ինչը անհավասար ուսումնական միջավայր է ստեղծում:

դ) Ուսումնական միջավայրին հարմարվելու համար երեխաների ինքնագնահատումը չի կարող պատնեշ լինել: Անհավասար կրթական միջավայրը դպրոցում բոլոր երեխաների համար ստեղծում է միատեսակ նորմեր:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **44.** Թվարկածներից ո՞րը **<u>չի հանդիսանում</u>** տվյալ տեքստի նպատակը:

ա) Մեզ ծանոթացնել կրթական անհավասարության տարբեր պատճառներին:
բ) Ընդգծել կրթության մեջ անհավասարության և երկրի տնտեսական հզորության միջև կապի կարևորությունը:
գ) Բացատրել, թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով է այս կամ այն գործոնը ազդում կրթական անհավասարության վրա:
դ) Ժամանակակից հետազոտությունների արդյունքների հիման վրա ցույց տալ կրթական անհավասարությունը վերացնելու ուղիները:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(9) **45. Վերլուծական էսսե**

Ուշադրությամբ ծանոթացե՛ք առաջադրանքում տրված երկու փոխհակասական դրույթներին: Ընտրությունը կատարե՛ք դրանցից մեկի օգտին: Բերե՛ք փաստարկներ ձեր ընտրությունը հիմնավորելու համար և քննադատորեն գնահատե՛ք հակասական դրույթը:

ա) Երեխային դպրոցում ավելի շատ ազատություն և ինքնավարություն պետք է տանք, որպեսզի զարգանա անկախ և բարձր քաղաքացիական պատասխանատվություն ունեցող անձնավորություն:

բ) Դպրոցում երեխայի ազատության որակը խստորեն պետք է վերահսկվի, որովհետև նա լրիվությամբ չի կարողանում ըմբռնել սեփական գործողությունների հետևանքները և դրանով վնաս է հասցնում և՛ իրեն և՛ ուրիշներին:

*Գրվածքը պետք է պարունակի առնվազն 120 բառ:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45